ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 25
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 25

20.02.2025թ.
01/749-2025

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՐԱԳՐՈՂ
ՏԻԿԻՆ ՍՈՒՍԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(susinakhachatrian@gmail.com)

Հարգելի՛ տիկին Խաչատրյան,

Ի պատասխան 2025 թվականի փետրվարի 11-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով) մուտքագրված Ձեր գրավոր հարցման հայտնում եմ, որ Մամուլի մոնիթորինգի ուսումնասիրության շրջանակում հրապարակումները հայտնաբերվել և ուսումնասիվել են իրավասու ստորաբաժանումների կողմից:

1. 2024 թվականի հոկտեմբերի 23-ին **infocom.am** կայքում *«Հարկային և մաքսային տեսուչների ստացած նվիրատվությունները հետագծելի չեն. ԿԿՀ-ն նրանց հայտարարագրերը չի ուսումնասիրել»* և 2025 թվականի հունվարի 13-ի՝ *«Ուժային կառույցների ներկայացուցիչները խոշոր նվիրատվություններ են հայտարարագրում, որոնց ծագման աղբյուրը հետագծելի չէ»*, ինչպես նաև 2024 թվականի դեկտեմբերի 11-ի՝ *«Դատավորների շքեղ նվերներն ու կույր վեթինգը. քանի՞ դատավոր է զրկվել պատմուճանից անօրինական գույքի համար»* վերտառությամբ հրապարակումների հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է հետևյալ գործընթացները.

- Սույն կետում նշված առաջին հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Արմեն Սաֆարյանի, Սուրեն Գալստյանի, Լիանա Մովսիսյանի, Տիգրան Նարիմանյանի, Վանյա Ղազարյանի, Կարեն Մարգարյանի, Լուսինե Զազյանի, Արամ Ղուկասյանի, Ձեփյուռ Ալեքսանյանի և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ

անհամապատասխանությունների ուսումնասիրություն: Մասնավորապես, կատարված ուսումնասիրության արդյունքում՝ Արմեն Սաֆարյանից, Սուրեն Գալստյանից, Սամվել Եղիազարյանից, Կարեն Մարգարյանից, Տիգրան Նարիմանյանից, Լուսինե Զազյանից, Արամ Ղուկասյանից և Զեփյուռ Ալեքսանյանից հայցվել են պարզաբանումներ, և ներկա պահին իրականացվում է ստացված պարզաբանումների գնահատում, իսկ Վանյա Ղազարյանի նկատմամբ որևէ գործընթաց չի նախաձեռնվել և առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում:

- Սույն կետում նշված երկրորդ հրապարակման հիման վրա՝ Կարեն Զոհրաբյանի, Արման Նիկողոսյանի, Վարդան Ավագյանի, Գնել Սիմոնյանի, Ստեփան Նազարյանի, Խորեն Բարխոյանի, Արթուր Հակոբյանի, Երվանդ Նիկոյանի հայտարարագրերում հայտարարագրված նվիրատվությունների վերաբերյալ ուսումնասիրությունը գտնվում է ընթացքի մեջ:
- Սույն կետում նշված երրորդ հրապարակման հիման վրա՝ Հանձնաժողովի հատարարագրերի վերլուծության վարչության կողմից ուսումնասիրվել են հրապարակմամբ նշված պաշտոնատար անձանց հայտարարագրերը: Ուսումնասիրության արդյունքներն առաջիկայում կներկայացվեն Հանձնաժողովի քննարկմանը:

2. Ստուգում կամ վերլուծություն իրականացնելիս Հանձնաժողովը որպես եկամուտ հայտարարագրված նվիրատվությունների դեպքում հաշվի է առնում նվիրատվության գումարի չափը, նվիրատվության շարժառիթը, նվիրատուի հետ ունեցած կապի բնույթը, նվիրատվության ստացման եղանակը (կանխիկ, անկանխիկ), ինչպես նաև նվիրատվությամբ ստացված դրամական միջոցների առաջնային ծագման աղբյուրների օրինականությունը, այդ թվում նվիրատվության՝ նվիրատուի օրինական եկամուտներով հիմնավորվածությունը և ողջամտությունը: Վերոնշյալ բոլոր հանգամանքների վերաբերյալ հայցված և ստացված պարզաբանումների գնահատման և համապատասխան օրենսդրական հիմքերի առկայության դեպքում ըստ անհրաժեշտության Հանձնաժողովը նվիրատուից պահանջում է ներկայացնել իրավիճակային հայտարարագիր կամ իրականացնում է այլ գործընթացներ, այդ թվում՝ Հանձնաժողովի կասկածները չփարատվելու դեպքում գործի նյութերն ուղարկում է Գլխավոր դատախազություն:
3. Երրորդ հարցադրմանն ի պատասխան հարկ է նշել, որ 2024 թվականի սեպտեմբերի 16-ին **infocom.am** կայքում *«Անհամապատասխանություններ*

Երևանի ավագանու մի շարք անդամների հայտարարագրերում» վերտառությամբ հրապարակման վերաբերյալ Հանձնաժողովն իրականացրել է Իոսիֆ Կուբատյանի և նրա կնոջ, Հայկ Գրիգորյանի, Սեդա Տեր-Մինասյանի, Տիգրան Պետրոսյանի, Արտակ Զեյնալյանի և նրա կնոջ, Լուսինե Սարգսյանի և նրա ամուսնու, Գրիգոր Իսկանդարյանի և նրա կնոջ, Զարուհի Փոստանջյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն և որոշել՝

- Իոսիֆ Կուբատյանից, Հայկ Գրիգորյանից և նրա ընտանիքի անդամ Գայանե Մինասյանից, Սեդա Տեր-Մինասյանից, Տիգրան Պետրոսյանից, Գրիգոր Իսկանդարյանից,, Զարուհի Փոստանջյանից, Արտակ Զեյնալյանի կնոջից՝ Լիլիթ Մուսեյանից, Լուսինե Սարգսյանի ամուսնուց՝ Վահե Հայրապետյանից, հայցել պարզաբանումներ և հավաստող փաստաթղթեր արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ: Բոլոր հայտարարատուներից ստացվել են պարզաբանումներ, որոնք գնահատման և քննարկման փուլում են:

4. Ի պատասխան հարցմամբ ներկայացված չորրորդ հարցադրմանը՝ տեղեկացնում եմ, որ հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետը և 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովն իրականացրել է համապատասխան ուսումնասիրություն «Ժողովուրդ» օրաթերթի՝ 2024 թվականի մայիսի 3-ի՝ ***«ՔՊ-ական պաշտոնյաները արդեն աստղաբաշխական գումարներ են ստանում օտարերկրյա ֆիրմաներից»*** վերտառությամբ հրապարակման հիման վրա:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության շրջանակներում Հանձնաժողովի կողմից էական է գնահատվել այն տեղեկությունը, ըստ որի՝ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը 2023 թվականին արտասահմանում գրանցված ընկերությունից որպես նվեր է ստացել 49.9 հազար ԱՄՆ դոլար:

Հարկ է նշել, որ նկարագրված դեպքը Հանձնաժողովը քննության է առել «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ նվերների ընդունման սահմանափակումների և շահերի բախման կարգավորումների լույսի ներքո: Վերոգրյալ իրավակարգավորումների և ներկայացված պարզաբանման հիման վրա Հանձնաժողովը Տ. Սափեյանի կողմից նվերների ընդունման սահմանափակման և (կամ) շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտման հիմքեր չի արձանագրել:

Միաժամանակ, կատարված նվիրատվության փաստը, համայնքի ղեկավարի և նվիրատուի միջև կապի բնույթը և հրապարակման մեջ շրջանառվող տեղեկությունները Հանձնաժողովի մոտ ողջամիտ կասկած են հարուցել առ այն, որ կատարված արարքները (ընդունված որոշումները) առերևույթ կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցագործության հատկանիշներ, ինչով պայմանավորված՝ 2024 թվականի հուլիսի 23-ին Հանձնաժողովը դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԴԱՎԻԹ ՄԿՈՅԱՆ**

Կատարող՝
Նարեկ Հովհաննիսյան
Հայտարարագրերի վերլուծության վարչություն
+37412777738